Հավելված N 1
ՀՀ վարչապետի N 882 - Ա
որոշման

Կ Ա Զ Մ
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԱԴՐՎՈՂ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

1. Հանձնաժողովի անդամներն են՝

   1) Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի նախագահը (համաձայնությամբ).
   2) Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի նախագահը (համաձայնությամբ).
   3) Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական խորհրդի նախագահը (համաձայնությամբ).
   4) Հայաստանի Հանրապետության նախագահի ներկայացուցիչը (համաձայնությամբ).
   5) Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը (համաձայնությամբ).
   6) Մարդու իրավունքների պաշտպանը (համաձայնությամբ).
   7) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը.
   8) Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարը.
   9) Միջազգային իրավական հարցերով ներկայացուցիչը.
   10) Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պետահիրավական հանձնաժողովի նախագահը (համաձայնությամբ).
   11) Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահը (համաձայնությամբ).
   12) Արդարադատության ակադեմիայի ռեկտորը (համաձայնությամբ).

13) «Հայաստանի Հանրապետության դատավորների միություն» հասարակական կազմակերպության նախագահը (համաձայնությամբ):

2. Ընտրության հանձնաժողովի անդամի մասնակցության անհնարինության կամ համաձայնության բացակայության դեպքում Հայաստանի Հանրապետության վարչապետը երկօրյա ժամկետում համալրում է Հանձնաժողովի կազմը՝ նշանակելով նոր անդամներ: Հանձնաժողովի կազմը պետք է բաղկացած լինի կենտ թվով անդամներից, որոնց ընդհանուր թիվը չի կարող պակաս լինել իննից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

31.08.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ